ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

# ՀՐԱՄԱՆ

29 փետրվարի 2016 թվականի №27-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» № 131-Ն ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» № 131-Ն որոշման կատարումն ապահովելու նպատակով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների (այսուհետ՝ Ծրագիր)՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության միջոցառումների իրականացման և գերակա խնդիրների լուծման վերահսկողների և կատարողների ցանկը՝ համաձայն №№ 1 և 2 հավելվածների:

2. Վերահսկողներին և կատարողներին՝ ապահովել Ծրագրի՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության միջոցառումների իրականացումը և գերակա խնդիրների լուծումը:

3. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել Ծրագրի՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության միջոցառումների և գերակա խնդիրների կատարման հսկողությունը, և յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 5-օրյա ժամկետում արդյունքների մասին ամփոփ տեղեկանքի ներկայացումը Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ:

ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ

Հավելված №
ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար
2016 թվականի փետրվարի 29 № 27-Ա հրաման

# ՑԱՆԿ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՆԵՐԻ ԵՎ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ

| հ/հ | Միջոցառման անվանումը | Ակնկալվող արդյունքը | Վերահսկողները | Կատարողները | Ժամկետը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1. | «Շենքերի էներգաարդյունավետության բարձրացման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Կսահմանվեն էներգաարդյունավետության ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական պահանջներ, որոնք էականորեն կսահմանափակեն շենքերում օգտագործվող վառելիքաէներգետիկ ռեսուրսների սպառման ծավալների նվազեցումը: | նախարարի տեղակալ՝ Հ.Հարությունյան | ՎԷԷՎ | հունիսի 3-րդ տասնօրյակ |
| 2. | «2016-2018 թվականների Հայաստանի Հանրապետության էներգախնայողության գործողությունների ծրագրի երկրորդ փուլին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Կսահմանվեն էներգախնայողության ազգային ծրագրի երկրորդ փուլի միջոցառումները, որոնք կօժանդակեն Հայաստանի էներգախնայողության քաղաքականության հետագա ձևավորմանը և դրա իրականացման կոնկրետ քայլերի որոշակիացմանը: | | | հուլիսի 3-րդ տասնօրյակ |
| 3. | «Արևային ֆոտովոլտային (ՖՎ) կայանի (կայանների) կառուցման ներդրումային ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Կսահմանվեն պահանջներ արևային ֆոտովոլտային ՖՎ կայանի (կայանների) կառուցման նպատակով ներդրումներ ներգրավելու համար՝ էլեկտրաէներգետիկական համակարգում տարեկան լրացուցիչ մինչև 100 մլն կՎտ.ժ էլեկտրաէներգիայի արտադրության հնարավորությամբ: Այդ կայանների կառուցման արդյունքում կնվազի Հայաստանի Հանրապետության կախվածությունը ներկրվող էներգակիրներից: | | | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ |
| 4. | «Հայաստանի Հանրապետության հիդրոէներգետիկայի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հիդրոէներգետիկայի զարգացման հայեցակարգը հաշվի կառնի ներկայիս իրողությունները և կձևավորի ՀՀ կառավարության տեսլականը: | | | նոյեմբերի 2-րդ տասնօրյակ |

Հավելված №
ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար
2016 թվականի փետրվարի 29 № 27 -Ա հրաման

# ՑԱՆԿ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՆԵՐԻ ԵՎ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ

| h/h | Գերակա խնդիրները | Գերակա խնդրի լուծմանն ուղղվող քայլերը | Վերահսկողներ | Կատարողներ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Տարածաշրջանային ինտեգրման ապահովում | - Իրան-Հայաստան 400 կՎ լարմամբ էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման ծրագրի շրջանակներում սարքավորումների ներկրման, հենասյուների հիմքերի փորման, բետոնավորման և հենասյուների մոնտաժման աշխատանքների մեկնարկ (Իրանի արտահանման զարգացման բանկ (ԻԱԶԲ) և Սանիր Ինտերնեյշնլ ՓԶԵ ընկերություն)<br>- Հայաստան-Վրաստան 400 կՎ լարմամբ էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման ծրագրի գլխավոր կապալառուի ընտրություն (Գերմանիայի զարգացման վարկերի բանկ (KfW) | նախարարի տեղակալ՝ Լ.Շահվերդյան, ՁՆԾՎ պետ՝ Հ.Հարությունյան | «ԲԷՑ» ՓԲԸ |
| 2. | Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգման աշխատանքների իրականացում | - Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի սարքավորումների և շինությունների զննման ու մնացորդային ռեսուրսի գնահատման աշխատանքների իրականացում և ավարտ (Ռուսաստանի Դաշնություն (ՌԴ) | նախարարի տեղակալ՝ Ա.Գալստյան, ՁՆԾՎ պետ՝ Հ.Հարությունյան, ԱԷԲ պետ՝ Ա.Պետրոսյան | «ՀԱԷԿ» ՓԲԸ |
| 3. | Վերականգնվող էներգետիկայի ընդլայնման ծրագրի շրջանակում երկրաջերմային ծրագրի նախապատրաստական աշխատանքների իրականացում | Կարկառի երկրաջերմային տեղանքում առաջնային էներգակրի պարամետրերի որոշման համար հորատանցքերի հորատման աշխատանքների կատարում՝<br>- մրցույթի հայտարարություն և կապալառուի ընտրություն<br>- հորատման աշխատանքների մեկնարկ<br>(Համաշխարհային բանկի միջոցով տրամադրվող Կլիմայի ներդրումային հիմնադրամների Վերականգնվող էներգետիկայի ընդլայնման ծրագրի միջոցներ) | նախարարի տեղակալ՝ Հ.Հարությունյան, ՎԷԷՎ պետ՝ Հ.Բադալյան | «ՀՎԷԷ» հիմնադրամ |
| 4. | «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում առկա տվյալների թվայնացում և հրապարակում | - երկրաբանական տեղեկության առնվազն 35-40 տոկոսի թվայնացում, համապատասխան ինտերնետ կայքի ստեղծում (ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալություն (USAID) | նախարարի տեղակալ՝ Ի.Իսայան, ԸՎ պետ՝ Վ.Վարդանյան | «ՀԵՖ» ՊՈԱԿ |